

**ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ
ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ
ԷՐԳՈԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ**

ՆԱԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ Գիտությունների ակադեմիայի
գիտակրթական միջազգային կենտրոնի
հոգեբանության ամբիոնի վարիչ,
հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
naira.hakobyan@isec.am

ԱՐԱՄ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՀՀ Գիտությունների ակադեմիայի
գիտակրթական միջազգային կենտրոնի
հոգեբանության ամբիոնի կլինիկական հոգեբանության
բաժնի մագիստրանտ
aramkhachatryan.95@mail.ru

ԹԵՐԵԶԱ ԱԶԱՏՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի
հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
azatyantereza41@aspu.am

ԱՐՄԻՆԵ ԱԶՆԱՈՒՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի
հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի
հատուկ մանկավարժության մագիստրանտ
armine.aznauryan1984@gmail.com

DOI: 10.54503/978-9939-1-1866-8-42

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների հոգեբանամանկավարժական և էրգոթերապևտիկ աջակցման համակարգի ուսումնասիրությանը: Բազմակի խանգարում ունեցող երեխաների կրթությունն ու սոցիալական ինտեգրումը պահանջում են համալիր, անհատականացված և բազմամասնագիտական մոտեցում՝ հիմնված երեխաների ճանաչողական, հուզական, շարժողական և սոցիալական առանձնահատկությունների խորքային գնահատման վրա:

Ներկայացվում է բազմակի խանգարումների ընդհանուր բնութագիրը, դրսևորված տարբեր համակցությունները և ծանրության աստիճանները, որոնք առաջ են բերում հատուկ կրթական ծրագրերի մշակման անհրաժեշտությունը՝ ուղղված յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքներին: Հատուկ շեշտադրում է կատարվում ներառական կրթության, տարբերակված ուսուցման,

կառուցվածքային միջավայրի և հաղորդակցման այլընտրանքային միջոցների կիրառման վրա:

Հոդվածում դիտարկվում են հոգեբանամանկավարժական մոտեցումները, որոնք ներառում են ֆունկցիոնալ գնահատում, անհատական ուսուցման պլանավորում և ուսումնական գործընթացի հարմարեցում, ինչպես նաև էրգոթերապևտիկ մոտեցումները, որոնք ուղղված են ինքնուրույնության, շարժողական հմտությունների և զգայական ինտեգրացիայի զարգացմանը:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ բազմակի խանգարումներ, էրգոթերապիա, զգայական ինտեգրացիա, մանկական ուղեղային կաթված, աուտիզմ, մտավոր հետամնացություն:

PSYCHOPEDAGOGICAL AND OCCUPATIONAL THERAPY APPROACHES FOR CHILDREN WITH MULTIPLE DEVELOPMENTAL DISORDERS

NAIRA HAKOBYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific Educational Centre
Doctor of Psychology, Professor
naira.hakobyan@isec.am

ARAM KHACHATRYAN

National Academy of Sciences
of the Republic of Armenia
International Scientific Educational Centre
Department of Psychology
MA student in Clinical Psychology
aramkhachatryan.95@mail.ru

TEREZA AZATYAN

Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan
Department of Special and Inclusive Education
PhD of Pedagogical Sciences, Associate Professor
azatyantereza41@aspu.am

ARMINE AZNAURYAN

Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan
Department of Special and Inclusive Education
Faculty of Special Education, MA student
armine.aznauryan1984@gmail.com

Abstract

The article is devoted to the study of a psychological–pedagogical and occupational therapy support system for children with multiple developmental disorders. The education and social integration of these children require a comprehensive, individualised, and multidisciplinary approach grounded in an in-

depth assessment of their cognitive, emotional, motor, and social characteristics.

The article presents the general characteristics of multiple disorders, their combinations, and levels of severity, necessitating the development of specialised educational programs tailored to each child's needs. Special emphasis is placed on inclusive education, differentiated instruction, structured environments, and the use of alternative communication methods.

The article examines psychological and pedagogical approaches, including functional assessment, individualised education planning, and adaptation of the learning process, as well as occupational therapy approaches aimed at developing independence, motor skills, and sensory integration.

Keywords and phrases: Multiple developmental disorders, occupational therapy, sensory integration, cerebral palsy, autism, intellectual disability.

ПСИХОПЕДАГОГИЧЕСКИЕ И ЭРГОТЕРАПЕВТИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ДЕТЯМ С МНОЖЕСТВЕННЫМИ НАРУШЕНИЯМИ РАЗВИТИЯ

НАИРА АКОПЯН

Зав. кафедрой психологии
Международного научно-образовательного центра
Национальной академии наук Республики Армения,
доктор психологических наук, профессор
naira.hakobyan@isec.am

АРАМ ХАЧАТРЯН

Магистрант факультета клинической психологии
Кафедры психологии
Международного научно-образовательного центра
Национальной академии наук Республики Армения
aramkhachatryan.95@mail.ru

ТЕРЕЗА АЗАТЯН

Кандидат педагогических наук, доцент
Факультета специального и инклюзивного образования
Армянского государственного педагогического университета имени Хачатуря
Абовяна
azatyantereza41@aspu.am

АРМИНЕ АЗНАУРЯН

Магистрантка факультета специальной педагогики
Кафедры специального и инклюзивного образования
Армянского государственного педагогического университета имени Хачатуря
Абовяна
armine.aznauryan1984@gmail.com

Аннотация

Статья посвящена изучению системы психопедагогической и эрготерапевтической поддержки детей с множественными нарушениями развития. Воспитание и социальная интеграция детей с множественными нарушениями требуют комплексного, индивидуализированного и междисциплинарного подхода, основанного на углубленной оценке когнитивных, эмоциональных, двигательных и социальных характеристик детей.

Представлены общие характеристики множественных нарушений, различные комбинации и степени тяжести их проявления, которые приводят к необходимости разработки специальных образовательных программ, ориентированных на индивидуальные потребности каждого ребенка. Особое внимание уделяется использованию инклюзивного образования, дифференцированного обучения, структурированной среды и альтернативных средств коммуникации.

В статье рассматриваются психопедагогические подходы, включающие функциональную оценку, индивидуальное планирование обучения и

адаптацию образовательного процесса, а также эрготерапевтические подходы, направленные на развитие самостоятельности, двигательных навыков и сенсорной интеграции.

Ключевые слова и фразы: множественные нарушения, эрготерапия, сенсорная интеграция, детский церебральный паралич, аутизм, умственная отсталость.

Ներածություն

Զարգացման բարդ և բազմակի խանգարումներ ունեցող երեխաներին համապարփակ օգնության միասնական համակարգի ստեղծումը ներկայումս ժամանակակից հատուկ կրթության առաջնահերթ ոլորտներից մեկն է: Հոգեբանամանկավարժական և էրգոթերապևտիկ գիտական մոտեցումների ներկայիս մակարդակը, ընդհանուր առմամբ, թույլ է տալիս ապահովել բազմակի խանգարումներ ունեցող երեխաների հաջող ինտեգրումը ուսուցման գործընթացում և սոցիալական կյանքում:

Զարգացման բարդ խանգարումներ ունեցող երեխաներին աջակցելը պահանջում է նրանց ճանաչողական, հուզական, հենաշարժողական, սոցիալական և վարքային առանձնահատկությունների համապարփակ ըմբռնում, ինչպես նաև արդյունավետ ուսումնառության միջավայր ձևավորելու համար անհրաժեշտ հոգեբանամանկավարժական և էրգոթերապևտիկ պայմանների ապահովում: Խանգարումները դրսևորվում են տարբեր ձևերով և աստիճաններով՝ թեթևից մինչև խորը, և յուրաքանչյուր մակարդակ պահանջում է հատուկ ուսուցման ռազմավարություններ, անհատականացված աջակցություն և հարմարեցված կրթական միջավայր:

Հատուկ կրթության ժամանակակից մոտեցումը շեշտադրում է ներառական արժեքները, անհատական առանձնահատկությունների ճանաչումը և ուսումնական հնարավորությունների ստեղծումը, որոնք նպաստում են յուրաքանչյուր երեխայի լիարժեք մասնակցությանն ու զարգացմանը՝ անկախ նրա կարողություններից և առանձնահատկություններից [2]:

Բազմակի խանգարումները դիտարկելիս անհրաժեշտ է նշել, որ դրանք բնութագրվում են տարբեր համակցված դրսևորումներով և պահանջում են համալիր ու անհատականացված մոտեցում: Հատկապես մտավոր զարգացման խանգարումներով ուղեկցվող բարդ հաշմանդամություն ունեցող երեխաները հաճախ ունենում են մտածողության, հիշողության, ուշադրության, ընկալման, սոցիալական հաղորդակցության և ինքնակարգավորման դժվարություններ: Սակայն այս դժվարությունները չեն բացառում արդյունավետ ուսումնառության, հմտությունների զարգացման և հասարակական ակտիվ մասնակցության հնարավորությունները:

Այս համատեքստում հարկ է նշել հոգեբանամանկավարժական և էրգոթերապևտիկ գործունեության կարևորությունը, որը պետք է հիմնված լինի այն համոզման վրա, որ յուրաքանչյուր երեխա կարող է սովորել, եթե ուսուցումը, միջավայրը և աջակցության համակարգերը ձևավորվեն ըստ երեխայի զարգացման կարիքների և առանձնահատկությունների: Անհատական կրթական ծրագրերի, ֆունկցիոնալ գնահատումների, տարբերակված ուսումնական առաջադրանքների և թերապևտիկ միջամտությունների ներդրումը զգալիորեն բարելավում է մտավոր խանգարումներ ունեցող երեխաների որակյալ կրթության հասանելիության հնարավորությունները [3]:

Բարդ հաշմանդամություն ունեցող երեխաների կատեգորիան չափազանց բազմազան է իր դրսևորումների կառուցվածքով, ծանրությամբ և բնույթով, ինչը դժվարացնում է այդ երեխաների համար ուսուցման և աջակցության միասնական մոտեցումների մշակումը:

Սույն բազմաշերտ գործընթացի կիզակետում է գտնվում բազմամասնագիտական թիմի, ինչպես նաև բազմակի խանգարումներ ունեցող երեխաների ընտանիքի անդամների սերտ համագործակցությունը: Ծնողները արժեքավոր պատկերացումներ են տալիս իրենց երեխայի ուժեղ կողմերի, կարիքների և ամենօրյա գործունեության վերաբերյալ: Մանկավարժների, ծնողների, հոգեբանների, էրգոթերապևտների միջև համագործակցությունը ապահովում է զարգացման առաջընթացի շարունակականությունն ու հետևողականությունը: Հոգեբանական և էրգոթերապևտիկ մոտեցումներ ինտեգրելով՝ մասնագետները զարգացնում են բազմակի խանգարումներ ունեցող երեխաների ողջ ներուժը՝ ապահովելով վերջիններիս համար լիարժեք որակյալ կյանք:

Այս շրջանակում արդիական են զարգացման հոգեբանական տեսությունները, այդ թվում՝ Վիգոտսկու, Պիաժեի և Ժամանակակից գիտնականների աշխատությունները, որոնք շեշտադրում են մոտակա զարգացման գոտու, կառուցվածքային հիմքի, խաղային ուսուցման և զգայական ինտեգրացիայի կարևորությունը: Վերոնշյալ տեսությունների իրականացման հիմնական բաղադրիչն է տեխնոլոգիական առաջընթացը: Աջակցող սարքերը, հաղորդակցման գործիքները, թվային ուսուցման հարթակները և ադապտիվ ծրագրային ապահովումը օգնում են հաղթահարել հաղորդակցման, հիշողության, հենաշարժողական կարողությունների և ուշադրության դեֆիցիտի հետ կապված խոչընդոտները: Այս գործիքները թույլ են տալիս մանկավարժներին և էրգոթերապևտներին ստեղծել անհատականացված ուսումնական միջավայրեր, որոնք համապատասխանում են յուրաքանչյուր երեխայի ճանաչողական և զգայական կարիքներին [4]:

Բազմակի խանգարումների ընդհանուր բնութագիրը

Բազմակի հաշմանդամությունը բարդ խնդիր է, երբ երեխայի մոտ համատեղվում են մի քանի ֆիզիկական, մտավոր, զգայական կամ հաղորդակցական դժվարություններ: «Բազմակի հաշմանդամություն» տերմինը ընդհանուր և լայն իմաստ ունի: Տերմինից հնարավոր չէ ասել՝ քանի հաշմանդամություն ունի երեխան, որ հաշմանդամություններն են ներառված, կամ որքան ծանր է յուրաքանչյուր հաշմանդամության աստիճանը: Հնարավոր են հաշմանդամությունների բազմաթիվ համակցություններ: Անկախ խանգարումների տեսակներից, բազմակի խանգարումներ ունեցող յուրաքանչյուր երեխա պետք է ունենա հատուկ կրթական ծրագիր, որը նախատեսված է ոչ միայն նրա միակ, այլ բոլոր հաշմանդամություններից բխող կրթական կարիքները բավարարելու՝ ապահովելով անհատականացված ուսուցում, բազմազգայական մոտեցում և աջակցություն՝ զարգացման բոլոր ոլորտներում: Այս վիճակը ստեղծում է բացառիկ մարտահրավերներ ոչ միայն երեխայի առօրյա կյանքում, այլ նաև կրթության, սոցիալական ինտեգրման և առողջապահական ծառայությունների հասանելիության առումով:

Բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաները հաճախ ենթարկվում են ճանաչողական, շարժողական և սոցիալ-էմոցիոնալ խնդիրների միաժամա-

նակյա ազդեցության, ինչը պահանջում է համապարփակ, համակարգված և անհատականացված մոտեցումներ: Մոտեցումների հիմնական նպատակն է ոչ միայն աջակցել երեխայի ուսուցողական և զարգացման ընթացքին, այլև բարձրացնել նրա ինքնուրույնությունը, սոցիալական հմտությունները և կյանքի որակը [5]:

Անհատը կարող է ունենալ մտավոր հաշմանդամություն՝ զգայական խանգարման հետ մեկտեղ, ինչպիսիք են կուրությունը կամ խլությունը: Այս համադրությունը կարող է բարդացնել ուսուցումը և հաղորդակցությունը՝ պահանջելով մասնագիտացված կրթական ռազմավարություններ: Անձը կարող է նաև ունենալ աուտիստիկ սպեկտրի խանգարում: Այս համադրությունը կարող է ազդել շարժունակության, սոցիալական փոխազդեցությունների և հաղորդակցման հմտությունների վրա: Պատահում են դեպքեր, երբ անհատը կարող է ունենալ և՛ խոսքի խանգարում, և՛ լսողության կորուստ, ինչը կարող է զգալիորեն ազդել նրա շփվելու և սոցիալական միջավայրերում մասնակցելու ունակության վրա:

Բազմակի խանգարումներ ունեցող երեխաների հետ աշխատանքը պահանջում է բազմազիտակարգային համագործակցություն՝ ներառելով հոգեբաններին, հատուկ մանկավարժներին, էրգոթերապևտներին և ծնողներին, ինչպես նաև օգտագործել տարբերակված և բազմազգայական մեթոդներ, որոնք համապատասխանում են երեխայի անհատական կարողություններին և զարգացման մակարդակին [6]:

Տեսամեթոդական հիմքեր

Տարիներ ի վեր մասնագետները կիրառում են մոտեցումների լայն շրջանակ՝ տարբեր համակցություններով, քանի որ գտնում են, որ դրանք լավագույնս բավարարում են յուրաքանչյուր երեխայի կարիքները: Զգայական և ճանաչողական մոտեցումները ամենից հաճախ համակցվում են այլ մոտեցումների հետ, ինչպիսիք են տեսողական տեղեկատվության վերլուծությունը, կենսամեխանիկական և հոգեաօգիալական մոտեցումները: Բազմամասնագիտական թիմերը ստեղծում են իրենց սեփական «բազմամոդել» մոտեցումները՝ երեխաների կարիքները լավագույնս բավարարելու համար: Բազմակի խանգարումների տարբեր մակարդակներ ունեցող երեխաներին աջակցելու մեթոդաբանական շրջանակը հիմնված է անհատականացված մոտեցումների, ինչպես նաև հոգեբանամանկավարժական և էրգոթերապևտիկ գործընթացների վրա: Այս մեթոդները նպատակ ունեն ստեղծել մատչելի, իմաստալից և երեխաների զարգացմանը համապատասխան ուսումնական միջավայրեր, որոնք կբավարարեն հաշմանդամության բազմազան կարիքները [7]:

Այս պայմաններում հոգեբանամանկավարժական և էրգոթերապևտիկ մոտեցումների առաջին մեթոդաբանական սկզբունքը երեխաների համալիր գնահատման ընթացակարգերի կիրառումն է: Ֆունկցիոնալ գնահատումը օգտագործվում է յուրաքանչյուր երեխայի ճանաչողական ուժեղ կողմերը, հաղորդակցման ունակությունները, ադապտիվ վարքագիծը, զգայական կարիքները և հուզականային առանձնահատկությունները որոշելու համար: Սույն գնահատումները հնարավորություն են տալիս մշակել անհատականացված աջակցման ծրագրեր, որոնք սահմանում են հատուկ նպատակներ, աջակցող ռազմավարություններ և չափելի արդյունքներ: Գնահատման գործընթացը շարունակական է:

Դիտարկենք վերոնշյալ հոգեբանամանկավարժական և էրգոթերապևտիկ մոտեցումները:

Այսօր, երբ մենք մտածում ենք ուսումնական գործընթացի մասին, հաճախ մեր մտքում պատկեր է առաջանում աշակերտների, որոնք աշխատում են առաջադրանքների վրա, մասնակցում են քննարկումների և միասին սովորում են: Սակայն իրականությունն ավելի բազմազան է, և այսօր դասարանները կազմված են տարբեր կարողություններ և կարիքներ ունեցող աշակերտներից: Նրանց թվում բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաները յուրահատուկ մարտահրավերներ են ներկայացնում մանկավարժների համար: Անհրաժեշտ է հարմարեցնել ուսումնական ռազմավարություններն այնպես, որ այս երեխաները ունենան սովորելու և հաջողության հասնելու հավասար հնարավորություններ: Անհրաժեշտություն է ծագում կիրառել տարբերակված ուսուցման մեթոդներ, որոնք ենթադրում են ուսումնական նյութի հարմարեցում, առաջադրանքների բաժանում փոքր և հասանելի փուլերի, ինչպես նաև տեսողական և գործնական միջոցների օգտագործում: Կարևոր է նաև կառուցվածքային և կանխատեսելի ուսումնական միջավայրի ստեղծումը, որը նպաստում է երեխայի անվտանգության զգացմանը և վարքային կայունությանը: Հատուկ ուշադրություն է դարձվում հաղորդակցման հմտությունների զարգացմանը՝ ներառյալ այլընտրանքային և լրացուցիչ հաղորդակցման միջոցների կիրառումը: Ահա այս ամենն իր մեջ ներառում է հոգեբանամանկավարժական մոտեցումներ **[8]**:

Ինչ վերաբերում է էրգոթերապևտիկ մոտեցմանը, ապա վերջինս նպատակ ունի զարգացնելու երեխայի ինքնուրույնությունը և առօրյա կյանքի հմտությունները: Էրգոթերապիան կենտրոնանում է մանր և խոշոր շարժողական կարողությունների, զգայական ինտեգրացիայի, ինքնասպասարկման հմտությունների և միջավայրին ադապտացիայի վրա: Տարբեր վարժություններ և գործառնություններ ընտրվում են այնպես, որ համապատասխանեն երեխայի զարգացման մակարդակին և խթանեն նրա ակտիվ մասնակցությունը: Զգայական դժվարությունների դեպքում կիրառվում են հատուկ տեխնիկաներ, որոնք օգնում են կարգավորել երեխայի արձագանքը արտաքին գրգռիչներին:

Էրգոթերապևտները նշում են զգայական ինտեգրատիվ տեխնիկայի կիրառումը, որը կապված է հավասարակշռության, ինքնաբուխ արձագանքների առաջացման և երեխայի կողմից զգացվող շոշափելի, պրոպրիոցեպտիվ և վեստիբուլյար ազդակների փոփոխման կամ շտկման հետ: Նրանք օգտագործում են տեխնիկաներ, որոնք կօգնեն «հանգստացնել» կամ «զգոնացնել» երեխային, և շեշտը դնում են երեխայի միջավայրում տեսողական, լսողական, շոշափելի և շարժողական խթանների փոփոխման վրա՝ զգայական ինտեգրացիայի կամ զգայական որոնումների վարքագիծը նվազեցնելու համար: Խորանիստ հպման, դանդաղ և հանգիստ բանավոր հուշումների և ոչ վառ լույսերի կիրառումը նկարագրվել է որպես երեխայի համար արգելակող մեխանիզմ: Էրգոթերապևտները օգտագործում են երեխայի զգայական ինտեգրացիայի մասին գիտելիքները՝ ուսուցիչներին և ծնողներին երեխաների վարքագիծը բացատրելու և նրանց առօրյա միջավայրում օգտագործելու ռազմավարություններ առաջարկելու համար **[9]**:

Կարևոր է շեշտադրել, որ այս էրգոթերապևտիկ մեթոդներն օգնում են բարձրացնել երեխայի ինքնագիտակցությունը, կենտրոնացնել

ուշադրությունը՝ նպաստելով, որ երեխան ավելի լավ կատարի իր առջև դրված առաջադրանքները և հմտանա հանձնարարությունների կատարման գործընթացում: Որոշ թերապևտներ նաև կարծում են, որ ճանաչողական մոտեցումը փոխանցում է երեխայի գաղափարների նկատմամբ հարգանք, ունի նրանց վերահսկողության զգացողությունը մեծացնելու ներուժ և մոտիվացնում է նրանց:

Այս մեթոդների շարքին է դասվում տեսողական տեղեկատվության վերլուծությունը, որն օգտագործում է երեխաների ճանաչողական հմտությունները՝ թույլ տալով նրանց շրջակա միջավայրից տեսողական տեղեկատվություն արդյունահանել և այն ինտեգրել այլ զգայական մեթոդների հետ: Այս մոտեցումը հիմնված է զարգացման, զգայական ինտեգրացիայի և ճանաչողական վերլուծության մոտեցումների վրա: Չնայած գիտական աշխարհում միայն հինգ էրգոթերապևտ է նշել տեսողական տեղեկատվության վերլուծության մոտեցման օգտագործման մասին, սակայն էրգոթերապիայի շրջանակներում նկատվել է, որ գրեթե բոլոր տեխնիկաները հիմնված են հենց այս մոտեցման վրա: **[10]:**

Վերջին տարիների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տեսողական տեղեկատվության վերլուծության մոտեցման օգտագործումը տեսողական ուշադրության, տեսողական հիշողության կամ կազմակերպչական դժվարությունների առկայության դեպքում՝ բարելավել է ակադեմիական առաջադրանքների կատարումը, ինչպիսիք են ընթերցանությունը, գրելը, մաթեմատիկական խնդիրների լուծումը և այլն:

Բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների կողմից ցուցաբերվող կարողությունների և հաշմանդամության լայն բազմազանությունը թույլ չեն տալիս լիովին բավարարել նրանց կրթական կարիքները:

Հետևաբար այս երկու մոտեցումների համադրումը ապահովում է առավել արդյունավետ արդյունքներ, քանի որ դրանք լրացնում են միմյանց՝ նպաստելով ինչպես կրթական առաջընթացին, այնպես էլ երեխայի ընդհանուր զարգացմանը և կյանքի որակի բարձրացմանը: Համագործակցությունը մասնագետների, ծնողների և կրթական հաստատությունների միջև կարևոր նախապայման է երեխայի ներառական և լիարժեք զարգացման համար **[11]:**

Ստացված արդյունքներ

Տեսամեթոդական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների կրթական և վերականգնողական գործընթացների արդյունավետ կազմակերպումը հնարավոր է միայն համալիր, համակարգված և անհատականացված մոտեցումների կիրառման պայմաններում: Հոգեբանամանկավարժական և էրգոթերապևտիկ մեթոդների համադրումը հանդես է գալիս որպես հիմնարար գործոն, որը թույլ է տալիս ապահովել երեխայի համակողմանի զարգացումը՝ ներառելով ճանաչողական, հուզականային, շարժողական և սոցիալական ոլորտները:

Ուսումնասիրության ընթացքում արձանագրվել է, որ բազմամոդել մոտեցումների կիրառումը, որտեղ համակցվում են զգայական, ճանաչողական, տեսողական, կենսամեխանիկական և հոգեւոցիալական մեթոդները, նպաստում է յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքների առավել ամբողջական բավարարմանը: Նման մոտեցումները հնարավորություն են տալիս ստեղծել

ձկուն և ադապտիվ ուսումնական միջավայրեր, որոնք համապատասխանում են երեխաների զարգացման տարբեր մակարդակներին և ապահովում են նրանց ակտիվ ներգրավվածությունը ուսուցման գործընթացում **[12]**:

Հատուկ կարևորություն է տրվում ֆունկցիոնալ և շարունակական գնահատման գործընթացին: Գնահատման միջոցով բացահայտվում են երեխաների ճանաչողական հնարավորությունները, հաղորդակցման ձևերը, ադապտիվ վարքագիծը, զգայական առանձնահատկությունները և հուզականային վիճակը: Այս տվյալների հիման վրա մշակվում են անհատականացված կրթական և թերապևտիկ ծրագրեր, որոնք ներառում են հստակ ձևակերպված նպատակներ, համապատասխան ռազմավարություններ և չափելի արդյունքներ: Արձանագրվել է նաև, որ գնահատման շարունակական բնույթը թույլ է տալիս ժամանակին վերանայել կիրառվող մեթոդները և համապատասխանեցնել դրանք երեխայի զարգացման դինամիկային:

Հոգեբանամանկավարժական մոտեցումների կիրառման արդյունքում արձանագրվում է, որ տարբերակված ուսուցման ռազմավարությունները զգալիորեն բարձրացնում են ուսումնական գործընթացի արդյունավետությունը: Ուսումնական նյութի հարմարեցումը, առաջադրանքների փոփոխությունները, տեսողական և գործնական միջոցների կիրառումը, ինչպես նաև կառուցվածքային և կանխատեսելի միջավայրի ապահովումը նպաստում են երեխաների ուշադրության կենտրոնացմանը, առաջադրանքների հաջող կատարմանը և վարքային կայունությանը: Կարող ենք ասել, որ այլընտրանքային և լրացուցիչ հաղորդակցման միջոցների կիրառումը բարելավում է երեխաների հաղորդակցական կարողությունները, մեծացնում է նրանց սոցիալական փոխազդեցության հնարավորությունները և նվազեցնում վարքային դժվարությունները **[13]**:

Էրգոթերապևտիկ միջամտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք էական դեր ունեն երեխաների ինքնուրույնության զարգացման գործում: Արձանագրվել է, որ մանր և խոշոր շարժողական հմտությունների զարգացումը, զգայական ինտեգրացիայի խթանումը և ինքնասպասարկման կարողությունների ձևավորումը նպաստում են երեխայի առօրյա կյանքի որակի բարձրացմանը: Զգայական ինտեգրացիայի տեխնիկաների կիրառումը արդյունավետ է ինչպես երեխայի վարքային արձագանքների կարգավորման, այնպես էլ ուշադրության և ինքնակարգավորման կարողությունների զարգացման տեսանկյունից: Խորանիստ հպման, կարգավորված լուսային և ձայնային միջավայրի, ինչպես նաև համապատասխան շարժողական ակտիվությունների կիրառումը նպաստում են երեխայի հուզական հավասարակշռության պահպանմանը և ուսումնական գործընթացում ներգրավվածության բարձրացմանը:

Եզրակացություն

Ամփոփելով իրականացված տեսական և մեթոդական վերլուծությունը՝ կարելի է եզրակացնել, որ զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների կրթության և վերականգնողական աջակցության արդյունավետ կազմակերպումը հնարավոր է միայն համալիր, բազմամասնագիտական և անհատականացված մոտեցումների համադրությամբ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների խորքային գնահատումը հնարավորու-

թյուն է տալիս մշակել նպատակային և արդյունավետ անհատական ծրագրեր, որոնք ուղղված են ոչ միայն ակադեմիական հմտությունների զարգացմանը, այլև ինքնուրույնության, հաղորդակցման կարողությունների և սոցիալական ադապտացիայի խթանմանը: Ֆունկցիոնալ և շարունակական գնահատման իրականացումը ապահովում է միջամտությունների ճկունություն և համապատասխանեցում երեխայի զարգացման դինամիկային **[11]**:

Արձանագրվում է, որ տարբերակված ուսուցման, կառուցվածքային և կանխատեսելի ուսումնական միջավայրի, ինչպես նաև այլընտրանքային հաղորդակցման միջոցների կիրառումը զգալիորեն բարելավում են երեխաների ուսումնական ներգրավվածությունը և վարքային կայունությունը: Նշենք, որ էրգոթերապևտիկ միջամտությունները նպաստում են շարժողական, զգայական և ինքնասպասարկման հմտությունների զարգացմանը՝ բարձրացնելով երեխաների ինքնուրույնության մակարդակը և առօրյա կյանքի արդյունավետությունը:

Արդյունքում պարզ է դառնում, որ բազմամոդել մոտեցումների կիրառումը, ներառյալ զգայական ինտեգրացիան և տեսողական տեղեկատվության վերլուծությունը, դրական ազդեցություն ունեն ինչպես ճանաչողական գործընթացների, այնպես էլ ակադեմիական առաջադիմության վրա: Այս մոտեցումների համադրումը ապահովում է ուսուցման առավել ամբողջական և երեխայի կարիքներին համապատասխան կազմակերպում **[14]**:

Ի վերջո առանձնահատուկ կարևորություն ունի մասնագետների և ծնողների միջև համագործակցությունը: Համագործակցային մոդելի արդյունավետությանը նպաստող հիմնական տարրերից մեկն այն է, որ համատեղ աշխատանքի միջոցով թիմի առանձին անդամները ձեռք են բերում միմյանց փորձի վերաբերյալ ընդհանուր ըմբռնում և գիտելիքներ:

Կարելի է եզրակացնել, որ զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների հետ աշխատանքի հաջողությունը պայմանավորված է գիտականորեն հիմնավորված, համակարգված և անհատականացված մոտեցումների կիրառմամբ, որոնք ուղղված են ոչ միայն կրթական, այլև սոցիալական և կենսագործունեության բոլոր ոլորտներում երեխայի լիարժեք ներառմանը **[15]**:

Օգտագործված գրականության ցանկ

1. «ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԽԱՆԳԱՐՈՒԽՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐ: ԱԶԱԿՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» Մեթոդական ուղեցույց, 2024
2. National Institute of Mental Health, 2025
3. World Bulletin of Education and Learning (WBEL), Volume 01, Issue 02, November 2025
4. The American Journal of Occupational Therapy, 1999, Vol. 53(5), 506–513
5. Psychology and Behavioural Science International Journal 8(2) DOI:10.19080/PBSIJ.2018.08.555732
6. European Journal of Special Education Research, ISSN: 2501 – 2428, Volume 11 | , Issue 4, | 2025
7. Health-related quality of life in children and adolescents who have a diagnosis of attention-deficit/hyperactivity disorder. Klassen AF, Miller A, Fine S. Paediatrics. 2004 Nov;114(5): e541-7. doi: 10.1542/peds. 2004-0844.
8. Telehealth Versus Face-to-Face Fine Motor and Social Communication Interventions for Children With Autism Spectrum Disorder: Efficacy, Fidelity, Acceptability, and Feasibility, Su WC, Cleffi C, Srinivasan S, Bhat A. Am J Occup Ther. 2023 Nov 1;77(6):7706205130. doi: 10.5014/ajot.2023.050282.

9. MENTAL RETARDATION AND DEVELOPMENTAL DISABILITIES RESEARCH REVIEWS 11: 143–148 (2005)
10. УЧЕБНИК ДЛЯ ВУЗОВ ПЕДАГОГИЧЕСКАЯ ПСИХОЛОГИЯ, Н.В. КЛЮЕВОЙ, 2003
11. ПЕДАГОГИЧЕСКАЯ ПСИХОЛОГИЯ, Э.Г. Волчков, 2014
12. A systematic review of sensory-based treatments for children with disabilities. Barton EE, Reichow B, Schnitz A, Smith IC, Sherlock D. Res Dev Disabil. 2015 Feb; 37:64–80. doi: 10.1016/j.ridd.2014.11.006. Epub 2014 Nov 25.
13. Scottish Educational Review 47(1):5–14, DOI:10.1163/27730840-04701003, March, 2015
14. Gemeinsamer Bundesausschuss (G-BA). Richtlinie über die Verordnung von Heilmitteln in der vertragsärztlichen Versorgung (Heilmittel-Richtlinie/Heilm-RL). 2023
15. European Journal of Special Needs Education Volume 29, 2014 –Issue 3